

ԱՇԽԵՆ ԱՐԱՁՅԱՆ

ՔՆՔՈՒՇՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Քնքուշը լուրջ աղջկա տպավորություն չէր թողնում, ուշքն ու միտքը ծիծաղին ու երգին էր տվել, ծամոնն էլ բերանից չէր հանում: Բայց շատ գեղեցիկ էր, շատ էլ լավ էր երգում: Երգից հետո հանդիսատեսները երկար ծափահարում էին, իսկ նա անհոգ ծիծաղում էր: Գառնիկը հենց դահլիճում սիրահարվեց, և մի քանի օր անց մեծ նվերներով նշանդրեք արեցին: Ով մոտենում էր նվերը տալու, նախ՝ այտն էր դեմ անում Քնքուշը, որ համբուրեն, ապա՝ մատը, որ մատանին հագցնեն: Իսկ ծիծաղը կար ու կար: Տիկին Շողիկը իր տղայի լրջությանն էր նայում, հարսնացուի թվռոցին ու հռռոցին, սրտից արյուն էր կաթում, բայց ամուսնու հոգը չէր. կենացներ էր ծաղկեցնում, ուտում, խմում, հարսի հետ կշկջացնում, տղայի հետ կատակներ անում:

Նշանդրեքի հաջորդ օրն էր, Քնքուշը մտավ այգի, ծառերի տակով գնաց ու եկավ, ետ ու առաջ քայլեց, հետո նկատեց եգիպտացորենի դարսած ցողունների վրա անհոգ պառկած կատվին, զգույշ մոտեցավ ու հենց նրա մոտ, ցողունների վրա նստեց և սկսեց կատվի հետ զրուցել, մատի մատանիների հետ խաղալ: Մի մատից հանում, մյուսին էր հագցնում, հետո հերթը հասավ ականջօղերին, նորից մեկից հանեց մյուսին հագցրեց, իրեն-իրեն ժպտալով, իրեն-իրեն ծիծաղելով: Հետո վզի ոսկե հաստ շղթայիկը հանեց, ձեռքի մեջ խաղացրեց: Արևի տակ ոսկին փայլփլում էր, իսկ նա հիանում էր: հետո կատվին գրկեց ու շղթայիկը փաթաթեց կատվի մեջքով ու վզով: Քնքուշը նայեց ու արածով հիացավ, հետո կատվին ցած դրեց, հիմա էլ այդպես մի քիչ հեռվից նայեց: Շղթայիկը արևի տակ ավելի պայծառ էր փայլփլում:

– Ի՛նչ գեղեցիկ է... – հիացմունքով շշուշուց ու շուրջը նայեց, իսկ կատուն, ասես վիրավորվելով, երեսը թեքեց ու մի ցատկով անցավ հարևանի ցակապատը:

– Վա՛յ...– Քնքուշը վեր թռավ տագնապած ու վազեց կատվի ետևից: Կատուն ավելի բարձր թռիչք գործեց ու նստեց խոտի դեզին, – վա՛յ, – ճչաց Քնքուշը, ապա սկսեց կատվին աղաչել, – փիսո ջան, ցավդ տանեն, էդ իմ

նշանի շղթայիկըն է, ոսկի է, Գառնիկի հայրն է նվիրել: Խնդրում եմ, աղաչում եմ...

Դեպքին առաջինը վրա հասավ փոստատար Բավականը:

– Ախշի՛, էդ խի՞ ես աղոթում, – հարցրեց հեզմանքով, բայց նկատեց կատվին, ու աչքերը չռվեցին, – վա՛յ, քոռանա քո մայրը... էս քո հերթական շաշուքունը կլինի: Վա՛յ... – սա էլ այնպես բարձր ճչաց, որ դպրոցից տուն դառնող ուսուցչուհի Գայանեն լսեց ու տեղում մեխվեց:

Չետո հավաքվեցին ու հավաքվեցին: Տղամարդ, կին, երեխա:

Ակնթարթ չէր անցել, դեզը պաշարել էին: Քնքուշի մայրն էլ հայտնվեց, ինչ-որ մեկը վազեց վարսավիրանոց, իմացրեց Քնքուշի հորը՝ Ալբերտին: Խեղճը լեղապատառ եկավ, սպիտակ խալաթը հագին, բաց ածելին մատների արանքում:

Կատուն բազմել էր դեզի գլխին՝ արքայավայել կեցվածքով և միտք չունեի բնավ իջնելու: Մեկն առաջարկեց սանդուղք դնել, բարձրանալ: Դպրոցի տնտեսվար Ռաֆիկը, որ աշակերտների հետ այդտեղ էր վազել, գործնական տեսքով առաջ եկավ:

– Առանց սանդուղքի էլ կբարձրանամ, միայն օգնեցեք :

Չարյուրից ավելի մարդ կար, անմիջապես ուսները դեմ տվեցին, Ռաֆիկը կանգնեց նրանց ուսերին, խոտի մեջ հեմարաններ որոնելով՝ բարձրացավ: Չամարյա հասել էր գագաթին, կատուն խոտի խշշոցից վեր թռավ ու մի ոստույնով կանգնեց ծառին, այնտեղից էլ մի ուրիշ ծառի, այնտեղից էլ հաջորդ ցանկապատն անցավ:

Դպրոցականների համար դա զվարճալի խաղ էր, ուն ոտքը բռնեց, կատվի հետքերով սլացավ: Կատուն բոլորին խաբս տվեց և կարծես նրանց ավելի բորբոքելու, թե ծաղրելու համար հայտնվեց չորսհարկանի բնակելի շենքի գլխին: Չիմա էլ շենքը պաշարեցին: Կատուն հանգիստ ճեմում էր տանիքին, գնում ու գալիս՝ արևի տակ պսպղացնելով մեջքին օղակված ոսկե շղթայիկը, կարծես կամենում էր ասել.

– Նայեցեք ու հիացեք:

– Երևում է, սա էստեղից իջնելու միտք չունի: Ջավենին գտնենք, գա՛ սպանի: Ուրիշ ճար չկա:

Առաջարկությունը խելքին մոտիկ համարեցին ու մի քանի հոգով վազեցին որսորդ Ջավենի տուն, որ այնքան էլ հեռու չէր: Ջավենը գրիպով հիվանդ պառկած էր, գլուխը բրդե շալով պինդ փաթաթած, ձայնը հազիվ էր դուրս գալիս: Տղաներին լսեց և կտրուկ պատասխանեց.

– Չէ՛:

– Ո՞նց թե՛ չէ: Չէ-ով բան դուրս չի գա, – բորբոքվեցին:

– Չէ՛ ու չէ՛: Լա՞վ լսեցիք, – Ջավենը երեսը դեպի պատը շրջեց՝ անկոտրում ու վճռական:

Տղերքը գոռով նրան տեղաշորից հանեցին, տաբատը գոռով վրան քաշեցին, բոբիկ ոտքերով դուրս բերեցին: Մեկն էլ հրացանը իսկույն գտավ, բերեց, գոռով ձեռքը տվեցին, բայց Ջավենը չվերցրեց:

– Հասկացիր՝ ոսկի է, այն էլ՝ հազարանոց: Աբոն մեղք է, մեր խեղճուկրակ ընկերն է, Շողիկից չի պրծնի...

– Հազար չէ, քսան հազար էլ լինի, ես էսքան ժողովրդի մեջ հրացան չեմ կրակի, են էլ՝ կատվի վրա:

– Շատ էլ խղճով չես, – հեզնեցին, – անմեղ կխտար ու նապաստակ ես սպանում, հիմա կատվին մեղք եկա՞ր:

– Հա՛, սպանում եմ, լավ էլ անում եմ, – Ջավենն էլ իր հերթին բորբոքվեց և կտրված ձայնի ողջ ուժգնությամբ, որ ավելի շուտ ծղրտոց էր հիշեցնում, գոռաց, – հա՛, կխտար էլ եմ սպանում, կաքավ՝ էլ, նապաստակ՝ էլ, արջ՝ էլ, գայլ՝ էլ, մարդ՝ էլ, կին՝ էլ, երեխա՝ էլ, ձեզ՝ էլ, ինձ՝ էլ, համա կատու չեմ սպանի: Հասկացա՞ք.

Տղերքը ձեռնունայն վերադարձան:

Հավաքվածների մեջ էր նաև կատվի տիրուհին: Կանանցից մեկը նրան տեսնելով՝ ուրախացած առաջարկեց.

– Պայծառ տատ, քո կատուն է, ձայնիդ սովոր: Կանչիր, գուցե քեզ լսի, մի բան դուրս գա:

– Հա՛, ճիշտ է ասում, – այս ու այն կողմից արձագանքեցին:

Պայծառը առաջ եկավ, իրեն հավաքեց և հարմար դիրք ընդունելով, որպեսզի կատվին ավելի տեսանելի լինի, սկսեց.

– Արի՛, արի՛, փիսո՛ ջան... Իմ փաշա՛, իմ գլավնի՛, իմ պրիստա՛վ, իմ նախարար ու վարչապետ: Աշխարհով մեկ, քաղաքով մեկ, մարզով մեկ, իմ թանկ ու մինուճար փիսո ջան... Արի՛, արի՛...

Ամբոխը նրա հետ կրկնեց.

– Արի՛, արի՛...

Կատվի հեչ պետքը չէր և ուշադրություն չդարձրեց նրանց մեղամաղձոտ խնդրանքին, աղաչանք-պաղատանքին, շրջվեց տանիքի մյուս կողմը, որտեղ մեծ ճանապարհին էր, առանց ետ նայելու շենքի գլխից թռավ, անցավ ճանապարհը, մտավ նեղ, ծուռուճուռ փողոցները և անհետացավ՝ կարծես մարտահրավեր նետելով հավաքվածներին, թե՛

– Եթե տղերք եք, հասեք: